U.S. Department of Housing and Urban Development
Office of Housing Office of Multifamily Housing Programs

ԱԶԴԱԳԻՐ

HUD-ի ԿՈՂՄԻՑ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ համար

Բաժին 202/162 - Նախագծի օժանդակության պայմանագիր (Project Assistance Contract, PAC)
Բաժին 202/811 - Նախագծի վարձակալության օժանդակության պայմանագիր (Project Rental Assistance Contract, PRAC)

«ԻՆՉՊԵՍ Է ՈՐՈՇՎՈՒՄ ՁԵՐ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ»

Բնակարանային շինարարության վարչություն

****Հունիս 2007****

Սույն Ազդագիրը Սեփականատեր/Կառավարիչ գործակալներին (Owner/Management Agents, OA) և HUD-ի կողմից օժանդակվող քաղաքացիներին իրենց եկամուտների ներկայացման և դրանց ճշգրտման հետ կապված իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացնող ընդհանուր ուղեցույց է:

Ինչու է եկամտի և վարձավճարի ճշգրիտ որոշումը կարևոր

Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարության (Department of Housing and Urban Development, HUD) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ քաղաքացի ընտանիքներ սխալ վարձավճար են վճարում: Այս խնդրի հիմնական պատճառները հետևյալն են՝

- Քաղաքացի ընտանիքների կողմից եկամտի պակաս ներկայացնելը, և
- OA-երի կողմից բացառումներն ու նվազեցումները հաշվի չառնելը, որի իրավունքը քաղաքացի ընտանիքներն ունեն:

OA-երը և քաղաքացիները բոլորն էլ պարտավոր են հետևել, որ ճիշտ վարձավճար վճարվի:

OA-ի պարտավորությունները.

- Ձեռք բերել եկամտի ճշգրիտ տեղեկություններ
- Ճշտել քաղաքացու եկամուտը
- Հետևել, որ քաղաքացիները ստանան բացառումները և նվազեցումները, որոնց իրավունքը նրանք ունեն
- Ճշգրիտ կերպով հաշվարկել Վարձակալի վարձավճարը
- Վարձակալներին տրամադրել լիզինգային պայմանագրի և վարձավճարի որոշման պատճենը
- Վերահաշվարկել վարձավճարը, երբ ընտանիքի կազմում փոփոխություն է տեղի ունենում, և՝ ամսական $200-ից ավել եկամտի փոփոխություն է զեկուցվում
- OA կանոնների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, եթե պահանջվում է
- Քաղաքացիներին տեղեկացնել եկամտի զեկուցման կամ վարձավճարի որոշման հարցում պահանջների որևէ փոփոխության դեպքում

Քաղաքացիների պարտավորությունները.

- Ներկայացնել ճշգրիտ տեղեկություններ ընտանիքի կազմի վերաբերյալ
- Ներկայացնել ամբողջ եկամուտը
- Պահպանել եկամուտը և ծախսերը փաստող թղթերի, ձևերի և կտրոնների պատճենները
- Ընտանիքի կազմի կամ ստացվող եկամտի փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնել տարեկան վերաճշգրտումների ժամանակ
- Եկամտի ճշգրտման համար ստորագրել համաձայնության ձևաթղթեր
- Հետևել լիզինգի պահանջներին և շենքի պահպանության կանոններին

Եկամուտը որոշելը

Ընտանիքի սպասվող համախառն եկամուտը որոշում է ոչ միայն պայմանունակությունը, այլ նաև վարձավճարը, որն ընտանիքը պետք է վճարի, ինչպես նաև անհրաժեշտ դրամաշնորհի չափը: Սպասվող եկամուտը, որը ենթակա է ընտանիքի կողմից ապագա տասներկու (12) ամիսների ընթացքում ստացվող բացառումների և նվազեցումների, հիմք է հանդիսանում ընտանիքի վարձավճարը որոշելու համար:

Ո՞րն է համարվում Տարեկան եկամուտ.

Համախառն եկամուտ – Եկամտի բացառումներ = Տարեկան եկամուտ

Ո՞րն է հարմարեցված եկամուտը.

Տարեկան եկամուտ - Նվազեցումներ = Հարմարեցված եկամուտ

Վարձակալի վարձավճարի որոշումը

Ընտանիքի կողմից վճարվող վարձավճարը հետևյալ գումարներից **առավելագույնն է**՝

- ընտանիքի ամսական *հարմարեցված* եկամտի 30%-ը
- ընտանիքի ամսական եկամտի 10%-ը
- Գործակալությունից ստացված բարեկեցության վարձավճարը կամ բարեկեցության վճարը տնային վարձերը վճարելու հարցում օգնելու համար:

Նշում. Սեփականատերը կարող է դիմորդ ընդունել PAC ծրագրին միայն այն դեպքում, երբ Վարձակալողի ընդհանուր վճարը չի գերազանցում վարձակալության ամբողջ գումարը: Այս նշումը չի վերաբերում PRAC ծրագրին: PRAC ծրագրի շրջանակներում որոշ դեպքերում վարձակալողի Վարձակալության ամբողջ վճարը կարող է գերազանցել PRAC-ի գործառնական վարձավճարը (համախառն վարձավճար):

Եկամուտն ու ակտիվները

HUD-ի կողմից օժանդակվող քաղաքացիները պարտավոր են տեղեկացնել **բոլոր** աղբյուրներից ստացվող բոլոր եկամուտների մասին Սեփականատիրոջը կամ Գործակալին (Owner or Agent, OA): Եկամուտների բացառումներն ու նվազեցումները վարձակալի վարձավճարի որոշման գործընթացի մի մասն են կազմում:

Ակտիվներից եկամտի գումարը որոշելիս, որը պետք է ներառվի տարեկան եկամտի մեջ, հաշվի է առնվում ակտիվներից ստացվող փաստացի եկամուտը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ընդհանուր ակտիվների իրացման արժեքը գերազանցում է $5000, և հետևաբար տարեկան եկամտի մեջ ներառվող գումարը առավելագույնն է ընդհանուր ակտիվների 2%-ից և ակտիվներից ստացվող փաստացի եկամտից:

Տարեկան եկամուտը ներառում է՝

- Աշխատավարձերի և ռոճիկների, հավելյալ աշխատաժամանակի վճարի, միջնորդավճարների, տուրքերի, թեյավճարների և պարգևավճարների ու անձնական ծառայությունների այլ փոխհատուցումների ամբողջ գումարը (նախքան աշխատավարձի նվազեցումները)
- Մասնագիտության կամ բիզնեսի գործառնություններից ստացված զուտ եկամուտը
- Անշարժ կամ անձնական գույքից ստացվող տոկոսները, բաժնեմասերը և ցանկացած տեսակի այլ զուտ եկամուտները (տես Ներառվող ակտիվներ/Չներառվող ակտիվներ ստորև)
- Սոցիալական ապահովությունից, ռենտային պարտատոմսերից, ապահովագրական պոլիսներից, կենսաթոշակային ֆոնդերից, կենսաթոշակներից, անկարողության կամ մահվան նպաստներից ստացվող պարբերական վճարների ամբողջ գումարն ու այլ նմանատիպ պարբերական վճարները, ինչպիսիք են՝ պարբերական գումարի հետաձգված փոխանցումների համար ստացվող միանվագ գումարը կամ ակնկալվող ամսական գումարները **(բացառությամբ լրացուցիչ ապահովության եկամտի և սոցիալական ապահովության նպաստների հետաձգված պարբերական վճարների, տես Տարեկան եկամտից բացառումները ստորև)**
- Եկամուտների փոխարեն ստացվող վճարները, ինչպիսիք են անկարողության և գործազրկության փոխհատուցումները, աշխատակիցների և աշխատանքից հեռանալու փոխհատուցումները **(բացառությամբ ընտանիքի ակտիվներին միանվագ ավելացումների, տես Տարեկան եկամտից բացառումները ստորև)**
- Բարեկեցության օժանդակություն
- Պարբերական և որոշակի նպաստները, ինչպիսիք են ալիմենտներն ու երեխայի օժանդակության վճարները, կազմակերպություններից կամ շենքում չբնակվող անձանցից ստացված պարբերական դրամաշնորհները և նվիրատվությունները
- Զինված Ուժերի անդամի բոլոր կանոնավոր վճարները, հատուկ վճարները և նպաստները (բացառությամբ թշնամու դեմ գրոհին մասնակցության հատուկ վճարի)
- **Միայն Բաժին 8-ի ծրագրերի համար, ցանկացած ֆինանսական օգնություն, որը ստացվել է ուսման վճարի գերազանցող մասի համար, և որն անձը ստանում է 1965 թ. Բարձրագույն Կրթության Ակտի (Higher Education Act of 1965) ներքո, եկամուտ կհամարվի տվյալ անձի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական օգնությունը եկամուտ չի համարվում կախյալ երեխա ունեցող 23 տարեկանից բարձր տարիքի անձանց համար, կամ եթե ուսանողը ապրում է իր ծնողների հետ, ովքեր ստանում են Բաժին 8-ում նշված օգնությունը: Սույն պարբերության համար,

«ֆինանսական օգնությունը» չի ներառում փոխառությունները՝ եկամուտը որոշելիս**

Ակտիվները ներառում են.

- Բաժնետոմսերը, պարտատոմսերը, մուրհակները, ավանդային հավաստագրերը, դրամական շուկայի հաշիվները
- Անձնական կենսաթոշակային և Կիու (Keogh) հաշիվները
- Կենսաթոշակային ֆոնդերը և կենսաթոշակները
- Խնայողական և չեքային հաշիվների կանխիկ դրամը, անվտանգ ավանդային արկղերը, տները և այլն
- Ամբողջ կյանքի ապահովագրության պայմանագրերի կանխիկ դրամը, որը հասանելի է անհատին նախքան մահը
- Վարձակալության տրված գույքում և այլ կապիտալ ներդրումները
- Անձնական գույքը, որը պահվում է որպես ներդրում
- Միանվագ ստացված կամ միանգամյա գումարները
- Գրավը կամ դիմորդի կողմից կնքված հավատարմագրային պայմանագիրը
- Շուկայական գնից ցածր գնով ձեռք բերված ակտիվները

Ակտիվները չեն ներառում.

- Անհրաժեշտ անձնական գույքը (հագուստը, կահույքը, ավտոմեքենան, ամուսնական մատանին, անկարողություն ունեցող մարդկանց համար հատուկ հարմարանքներով մեքենաները)
- Հնդկացիների հավատարմագրային հողից (Indian trust land) տոկոսները
- Կյանքի ժամկետային ապահովագրության պայմանագրերը
- Այն կոոպերատիվ միավորման կազմում սեփականությունը, որտեղ ապրում է ընտանիքը
- Գործող բիզնեսի մաս կազմող ակտիվները
- Դիմորդի կողմից արդյունավետ չտիրապետվող ակտիվները,
  կամ ակտիվները, որոնք գրանցված են անհատի անունով, սակայն.
  - դրանց կողմից ստեղծվող ակտիվները, կամ ցանկացած եկամուտ վերագրվում է մեկ այլ անձի օգտին, ով չի հանդիսանում ընտանիքի անդամ, և
  - այդ անձը պատասխանատու է ակտիվների կողմից ստեղծվող եկամտի դիմաց վճարվելիք եկամտահարկի համար
- Դիմորդին անհասանելի ակտիվները, և այն ակտիվները, որոնք դիմորդին եկամուտ չեն բերում (օրինակ՝ ֆիզիկական և մտավոր տրավմա ունեցող ամուսինը հանդիսանում է տան սեփականատեր իր ամուսնու հետ միասին: Ընտանեկան վիճակի հետևանքով նա ակտիվից որևէ եկամուտ չի ստանում և չի կարող ակտիվը փոխարկել կանխիկ դրամի):
- Շուկայական գնից ցածր գնով ձեռք բերված ակտիվները հետևյալ հանգամանքների հետևանքով.
  - Գրավի ետգնման իրավունքից զրկում
  - Սնանկացում
  - Բաժանման կամ իրարից հեռանալու համաձայնագիր, եթե դիմորդը կամ քաղաքացին ստանում է կարևոր փոխհատուցում, ոչ պարտադիր դոլլարային տեսքով:

Տարեկան եկամտից բացառումներ.

- Երեխաների (այդ թվում խնամակալ երեխաների) զբաղվածությունից եկամուտ, ովքեր 18 տարեկանից փոքր են
- Խնամակալ երեխայի և խնամակալ չափահասի խնամքի համար ստացվող վճար (սովորաբար՝ անկարողություններով անձիք, ովքեր կապ չունեն վարձակալի ընտանիքի հետ, և չեն կարող միայնակ ապրել
- Ընտանեկան ակտիվներին միանվագ ավելացումներ, ինչպիսիք են ժառանգությունները, ապահովագրավճարները (այդ թվում՝ առողջության և դժբախտ պատահարների ապահովագրության վճարներն ու աշխատողների փոխհատուցումը), կապիտալ ձեռքբերումները, անձնական կամ գույքային կորուստների փոխհատուցումները
- Ընտանիքի կողմից ձեռք բերված գումարները, որոնք նախատեսված, կամ նպատակաուղղված են որևէ ընտանիքի անդամի բժշկական ծախսերի փոխհատուցմանը
- Տանն ապրող աշխատողի եկամուտը
- **Վերը նշված Բաժին 8 ծրագրի համար ներառման է ենթակա այն ուսանողների եկամտի մասը, ովքեր ընդգրկված են Տարեկան Եկամտի Ներառման շրջանակներում բարձրագույն ուսումնական հաստատությունում,** ուսանողին ուղղակիորեն կամ ուսումնական հաստատությանը վճարվող ֆինանսական օգնության ամբողջ գումարի չափով
- Զինված Ուժերում ծառայող ընտանիքի անդամին վճարված հատուկ վճար թշնամու դեմ կռվում մասնակցության համար
- HUD-ի կողմից ֆինանսավորվող ուսումնական ծրագրի կողմից ստացված գումարներ
- Անկարողություն ունեցող անձի կողմից ստացվող գումարներ, որոնք սահմանափակ ժամկետով

անտեսվել են Օժանդակ ապահովության եկամտի պայմանունակությունը և նպաստները որոշելու նպատակով, քանի որ դրանք մի կողմ են դրվում Ինքնուրույնության հասնելու ծրագրում (Plan to Attain Self-Sufficiency, PASS) օգտագործվելու համար

- Մեկ այլ հասարակայնորեն օժանդակվող ծրագրի մասնակցի ստացած գումարները, որոնք նախատեսված, կամ նպատակաուղղված են հատկապես արտաքին ծախսերի համար (հատուկ հարմարանքներ, հագուստներ, տեղափոխություն, երեխայի խնամք և այլն), և որոնք ուղղված են միայն որոշակի ծրագրում մասնակցությունը հնարավոր դարձնելու համար
- Քաղաքացու ծառայության թոշակ (չպետք է գերազանցի ամսական $200-ը)
- Նահանգային կամ տեղական զբաղվածության ուսուցման ծրագրերում ընտանիքի անդամի մասնակցության կամ ընտանիքի անդամին որպես քաղաքացիների կառավարման մասնագետ ուսուցանելու արդյունքում ստացված լրացուցիչ եկամուտներ և նպաստներ
- Ժամանակավոր, չկրկնվող կամ պատահական եկամուտ (այդ թվում՝ նվերները)
- Նացիստական ժամանակաշրջանում հետապնդված մարդկանց վճարված փոխհատուցման վճարներ օտարերկրյա կառավարության կողմից, որոնք իրենց օրենքների համաձայն հանդիսանում են հարուցված դիմումները բավարարող
- $480 գերազանցող եկամուտը յուրաքանչյուր 18 տարեկանից բարձր տարիքի ուսանողի համար (բացառությամբ ընտանիքի ղեկավարի, համաղեկավարի, կամ ամուսնու)
- Որդեգրման օգնության վճարներ, որոնք գերազանցում են $480 յուրաքանչյուր որդեգրված երեխայի համար
- Օժանդակ ապահովության եկամտի և սոցիալական ապահովության նպաստների հետաձգված պարբերական վճարներ, որոնք ստացվում են միանվագ կամ ապագա ամսական գումարներով
- Ընտանիքի կողմից հարկային փոխհատուցումների կամ զեղչերի տեսքով ստացվող գումարներ՝ նախատեսված կացարանի համար վճարվող գույքահարկի տեղական օրենքով
- Նահանգային գործակալության կողմից զարգացման անկարողություն ունեցող և տանն ապրող ընտանիքի անդամին վճարված գումարներ՝ հատուցելու համար զարգացման անկարողություն ունեցող ընտանիքի անդամին տանը պահելու համար անհրաժեշտ ծառայությունների և սարքավորումների արժեքը

Դաշնային օրենքներով սահմանված բացառումներ.

- 1977 թ. Սննդադրոշմների Օրենքի (Food Stamp Act of 1977) համաձայն պայմանունակ ընտանիքին վճարված հատկացումների արժեքը
- 1973 թ. Տնային կամավորների ծառայության Օրենքի (Domestic Volunteer Services Act of 1973) համաձայն կամավորների վճարներ
- Ալյասկայի բնիկների Դիմումների լուծման Օրենքի (Alaska Native Claims Settlement Act) համաձայն ստացված վճարներ
- Միացյալ Նահանգների որոշ սահմանային տարածքներից ստացված եկամուտներ, որոնք հավատարմագրային իրավունքով պատկանում են որոշ հնդկացի ցեղերի
- Առողջապահության և մարդասիրական ծառայությունների՝ Ցածր եկամուտ ունեցող տների էլեկտրամատակարարման օգնության ծրագրի (Low-Income Home Energy Assistance Program) շրջանակներում տրամադրած վճարներ կամ հատկացումներ
- Աշխատանքի ուսուցման ընկերության Օրենքի (Job Training Partnership Act) շրջանակներում ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող ծրագրերից ստացված վճարներ
- Հետևյալ ֆոնդերի տիրապետումից ստացված եկամուտ. Օտտավայի հնդկացիների Մեծ Գետափ
- Հնդկացիների դիմումների հանձնաժողովի, կամ Միացյալ Նահանգների դիմումների դատարանի կողմից շնորհված արդարադատության ֆոնդերից ստացված մեկ անձին ընկնող բաժնետոմսերի առաջին $2,000-ը, անհատ հնդկացիների շահերը հավատարմագրային կամ արգելված հողերի նկատմամբ, այդ թվում՝ անհատ հնդկացիների կողմից տարեկան առաջին $2,000 եկամուտը, որը ստացվել է այդ հավատարմագրային կամ արգելված հողերի ֆոնդերի տոկոսներից
- 1965 թ. Բարձրագույն կրթության Օրենքի IV հոդվածի (Title IV of the Higher Education Act of 1965) համաձայն ֆինանսավորվող կրթաթոշակների գումարները, այդ թվում՝ Դաշնային աշխատանքի ուսուցման ծրագրի (the Federal work-study program) և Հնդկացիների գործերի նախարարության ուսանողների օժանդակության ծրագրերի (Bureau of Indian Affairs student assistance programs) պարգևները
- 1985 թ. Տարեց ամերիկացիների Օրենքի V հոդվածի (Title V of the Older Americans Act of 1985)

համաձայն ֆինանսավորվող ծրագրերից ստացված վճարները

- 1989 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո Էյջընթ Օրանժ Սեթլմենթ Ֆոնդի կամ *ապրանքանիշի պարտավորություններ դատական գործընթացները* կարգավորող պատասխանատու մարմնի կողմից ստացված վճարները
- 1980 թ. Մեյնի հնդկացիների դիմումների լուծման Օրենքի (Maine Indian Claims Settlement Act of 1980) համաձայն ստացված վճարները
- Ցանկացած տեսակի երեխայի խնամքի տրամադրման կամ կազմակերպման արժեք (կամ այդպիսի խնամքի տրամադրման կամ դրա հետ կապված ծախսերի փոխհատուցման համար ստացված ցանկացած գումար)՝ համաձայն 1990 թ. Երեխայի խնամքի և զարգացման դրամաշնորհի Օրենքի (Child Care and Development Block Grant Act of 1990)
- Վաստակած եկամտահարկի կրեդիտորական պարտքի (Earned income tax credit, EITC) փոխհատուցման վճարները՝ ստացված 1991 թ. հունվարի 1-ին, կամ դրանից հետո
- Հնդկացիների դիմումների հանձնաժողովի կողմից Ցեղերի կոնֆեդերացիային և Յակիմայի հնդկացիների միության խմբին, կամ Մեսկալերո արգելանոցի Ապաչիների ցեղին տրված վճարները
- 1990 թ. Ազգային և հանրային ծառայությունների Օրենքի (National and Community Service Act of 1990) համաձայն ԱմերիՔորփսի մասնակիցներին տրված վճարները, հատկացումներն ու եկամուտները
- 38 U.S.C. 1805-ի դրույթներով սահմանված ողնաշարի պարալիզ ունեցող և Վիետնամի վետերանի զավակ հանդիսացող երեխային վճարված ցանկացած հատկացումներ
- Հանցանքի զոհի փոխհատուցման ցանկացած գումար (Հանցանքի զոհերի Օրենքի (Victims of Crime Act) համաձայն), որը ստացվել է հանցանքի զոհերի օժանդակության ծրագրից (կամ այդպիսի օժանդակության ծախսի վճարման կամ փոխհատուցման արդյունքում)՝ սահմանված Հանցանքի զոհերի Օրենքի դրույթներով, դիմորդի նկատմամբ հանցանք գործելու պատճառով
- 1998 թ. Աշխատուժում ներդրումների Օրենքի (Workforce Investment Act of 1998) համաձայն անհատներին տրված վճարները, եկամուտներն ու հատկացումները
- 2008 թ. Վարձակալի կողմից Տնային և տնտեսական վերակառուցման Օրենքի (Housing and Economic Recovery Act of 2008, HERA) դրույթների համապատասխան վարձակալի կողմից Վետերանների գործերի վարչությունից միանվագ կամ հետագա ամիսների գումարներով ստացված ցանկացած հետաձգված անկարողության նպաստ

Նվազեցումներ.

- Յուրաքանչյուր կախյալի համար $480, այդ թվում՝ ամբողջական դրույքով սովորող ուսանողների և անկարողություն ունեցող անձանց
- Ծերերի կամ անկարողություն ունեցող անձանց ընտանիքների համար $400
- Ծերերի կամ անկարողություն ունեցող անձանց ընտանիքների համար կատարված չփոխհատուցվող բժշկական ծախսեր՝ առավելագույնը տարեկան եկամտի 3%-ի չափով. ըստ որում ծախսը հաշվի է առնվում միայն մեկ անգամ
- Անկարողություններ ունեցող ընտանիքների համար չփոխհատուցվող խելամիտ խնամքի հաճախումների և օժանդակ սարքավորումների ծախսեր, որոնք թույլ են տալիս ընտանիքի անդամերին աշխատել՝ առավելագույնը Տարեկան եկամտի 3%-ի չափով
- Եթե ծերերի ընտանիքը համապատասխանում է ինչպես չփոխհատուցվող բժշկական ծախսերին, այնպես էլ անկարողության օժանդակության ծախսերին, ընտանիքի եկամտի նվազեցման 3%-ը կիրառվում է միայն մեկ անգամ
- Երեխայի խնամքի բոլոր խելամիտ ծախսերը 13 տարեկանից փոքր երեխաների համար, որոնք անհրաժեշտ են ընտանիքի անդամին՝ աշխատանք գտնելու կամ ուսումը շարունակելու համար:

Օգտագործված նյութեր

Կանոնակարգեր.

- Ընդհանուր HUD ծրագրի պահանջներ; 24 CFR Մաս 5; և CFR 24 Մաս 891: (General HUD Program Requirements;24 CFR Part 5 and CFR 24 Part 891.)

Ձեռնարկ.

- 4350.3, Դրամաշնորհներ ստացած բազմաընտանիք տների ծրագրերի զբաղվածության պահանջներ (4350.3, Occupancy Requirements of Subsidized Multifamily Housing Programs)

Ծանուցումներ.

- "Դաշնային օրենքներով սահմանված բացառումներ", Ծանուցում 66 FR 4669, 2001 թ. ապրիլի 1 (“Federally Mandated Exclusions” Notice 66 FR 4669, April 20, 2001)

Լրացուցիչ տեղեկությունների համար.

HUD-ի ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք HUD-ի ինտերնետային կայք. http://www.hud.gov